ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2026թ. հունվարի 7 N 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի նոյեմբերի 28-ի N 3273-Ա հրամանը՝ որոշում եմ.

1. Հաստատել 2026 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանի 1-ին հավելվածով ներկայացված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) գրությամբ տեղեկացնել, որը պետք է պարունակի տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին:

6. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

7. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքները հրապարակել մարզպետի աշխատակազմի ինտերնետային պաշտոնական կայքում:

8. 2026 թվականի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագիրը եռօրյա ժամկետում տեղադրել մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

9. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

10. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 1/5/2026 16:31:48 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Մովսիսյան